«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Առարկա՝ <u>ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</u>

Թեմա՝ <u>ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՔՈՒՄ</u>

Դպրոց՝ «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ուսուցիչ՝ ԵՂԻԱԶԱՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ղեկավար՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

Մարտունի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն առարկայի դասավանդման ընթացքում ռազմահայրենասիրական և բարոյական դաստիարակության ու հոգեբանական աշխատանքների բարելավման ուղիները դպրոցում 7
Եզրակացություն.....26
Օգտագործված գրականության ցանկ.....27

Ներածություն

«Հայրենասիրությունը մարդկային առաքինությունների թագն ու պսակն է:
Վախկոտ ժողովուրդները պատերազմից տուժում են ավելի:
Հայրենասիրության հետ բարձրանում են ազգերը, ընկնում նրա պակասի հետ:»
Գարեգին Նժդեհ

Ներկայիս կարևոր խնդիրներից մեկը երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորումն է:

Երեխաների արժեքային համակարգի ձևավորման դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ, դասարանում, գործնական պարապմունքների ժամանակ, միշտ հիշելով և արտաբերելով հերոսների ոգևորիչ խոսքերը:

Հայրենասիրությունը դա հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտների բնորոշ, առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ է, որը հանդիսանում է անձի կարևոր, հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնարտահայտման ակտիվ գործընդացում՝ ի շահ հայրենիքի բարեկեցության: Ժամանակի մարտահրավերներին համարժեք պատասխան տալու համար պետությունն առաջին հերթին պետք է ապահովի լավ կրթություն և օժտված լինի անձնվիրությամբ, հայրենասիրությամբ , մեծահոգությամբ և բարոյական արժեքներով ձևավորի ստեղծագործ անհատ: Անժխտելի է որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության գոյատևումն անհնար է առանց այդ կառույցների միասնության և ամբողջականության: Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնքտիպ առանձնահատկությունները՝ հոգևոր և նյութական մշակույթով, արժեքային համակարգի վեհ դրսևորմամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ: Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս՝ անձը, հանրույթը, ազգը և այլն:

Սակայն այս ամենից երեխաների ուսուցման վերջնական արդյունքում ունենում ենք ապագա զինվորի համար անհրաժեշտ ռազմագիտական միջին գիտելիքներ, բարոյահոգեբանական հատկանիշներ, կամային հատկություններ, հայրենիքին ծառայելու ձգտում:

Մարդու իրավունքներին ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ և Հայաստանի Հանրապետության օրենքներում: Կրթական փաստաթղթերի հիմքում ևս առաջնահերթ են դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված քայլերը, ինչն օրինաչափ է և անհրաժեշտ:

Անձի արժեքային համակարգը դարեր շարունակ քննարկվել է տարբեր գիտակարգերի շրջանակում և տրվել դրանց բազմաթիվ սահմանումներ: «Արժեհամակարգ» հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով: Առանձնացնում են «արժեք», «արժեհամակարգ» հասկացությունների առավել քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ և կողմեր:

Մեր առջև նպատակ ենք դրել սովորողների շրջանում բացահայտել, նրանց ուսուցանել տարբեր տեսություններում անձի արժեքների վերաբերյալ ներկայացվող տեսակետները, որոնք հնարավորություն կտա դեռևս դպրոցում աշակերտի մեջ ներդնելու արժեքների ձևավորման հիմնական օրինաչափությունները:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր ու վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Անձը, մեր դեպքում աշակերտը, ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է:

Ներկա իրավիճակում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հասարակական կյանքի կազմակերպման լավագույն ձևն է և մարդկության հետագա զարգացումն ապահովելու հնարավորություն: Այսօր կուտակվել են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումները հնարավոր է նորարարական, ներառական և համագործակցային մոտեցումների դեպքում: Շատ հարցերում ավանդական մոտեցումներն ու լուծումներն այլևս բավարար չեն: Կրթությունը, որի հիմքում է նաև արժեհամակարգի ձևավորումն է, ժողովրդավարական ավանդույթները, ինքնությունը պահպանելու առաջնահերթ միջոց է:

Ժամանակակից մարտահրավերներին համապատասխան կրթության ապահովման անհրաժեշտ նախադրյալներից մեկն էլ սովորողների ստեղծագործական ակտիվությունն է, նրանց կառուցողական քննադատությունը, կրթական միջավայրում

մոտիվացումը, կրթական կարիքների գնահատումը և փոփոխվող, իրավիճակային պայմաններում հարմարումը:

Մանկավարժական գործունեության ընթացքում ստանձնած սոցիալական դերերով պայմանավորված ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները բազմամակարդակ, բազմաբնույթ են: Դրանք ձևավորվում են հաղորդակցական և ախտորոշման տարբեր մոդելների հիման վրա: Ժամանակակից պայմաններում ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների զարգացողական բնույթը նորովի մեկնարկման ակնկալիքով ինքնատիպ է փոխգործակցային հարաբերությունների դիտարկմամբ:

Պատմական տարբեր ժամանակներում տվյալ փուլի մարտահրավերները, արժեքային համակարգը, հասարակության, սոցիալական շերտերի պահանջները, հաղորդակցական մոդելներն իրենց կնիքն են թողնում մարդկանց սոցիալականացման ընթացքում կենսաբանական և սոցիալ-մշակութային ծրագրերի զարգացման, հետևաբար նաև մարդկային փոխհարաբերությունների վրա:Նշվածի արտացոլումը դրսևորվում է նաև սովորող-սովորեցնող միջանձնային փոխհարաբերություններում: Ուսուցիչներն իրենց մանկավարժական գործունեության ընթացքում իրավիճակային կամ երկարաժամկետ ձևավորում են փոխգործակցային հարաբերություններ աշակերտների հետ՝ փորձելով օգնել, աջակցել զգացմունքային և հոգեբանական, մասնագիտական աջակցություն ցուցաբերել:

Ինքնիշխան ու ազգային առումով միատարր մի այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, հասարակություն-պետություն-անհատ հարաբերությունների հիմքը պետք է լինի համապարտ պատասխանատվություն կրող ինքնորոշված ազատ քաղաքացիների հանրությունը՝ ժողովուրդը, այլ ոչ թե անհատը, ինչպես ընդունված է արևմտյան արժեհամակարգում:

Ժամանակակից աշխարհի քաղաքական և քաղաքակրթական մարտահրավերները ստեղծել են այնպիսի խառնաշփոթ, որ մարդն հայտնվել է ազգային դեմքն ու դիմագիծը կորցնելու իրական սպառնալիքի առջև: Ռեալի ու վիրտուալի միջև անընդհատ դեգերող ժամանակակից մարդու համար ևս ինքնության, ազգային արժեքների պահպանումը դարձել է գերխնդիր:

Այս հարցերի լուծումները պետք է փնտրել ազգի ու համամարդկային արժեքների պահպանման համատեքտում, որտեղ մեծ է հատկապես դպրոցի և ուսուցչի անփոխարինելի դերը:

Ստորև կդիտարկենք վերոնշյալ խնդիրների լուծման համար կրթության ունեցած կարևորագույն դերը:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն առարկայի դասավանդման ընթացքում. ռազմահայրենասիրական և բարոյական դաստիարակության ու հոգեբանական աշխատանքների բարելավման ուղիները դպրոցում:

Անձի արժեքային համակարգը ձևավորվում է դեռ մանկուց ընտանիքում, այնուհետև նախնակրթարանում, հետո ամրապնդվում է դպրոցում: Այսօրինակ շարժընթացն ընդունված էդիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ:

Այդ ամենում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

Ժամանակակից աշխարհում կրթությունը ոչ միայն հասարակական, ազգային արժեք է, այլև յուրաքանչյուր անձի կրթական պահանջմունքների բավարարման աղբյուր: Այսպիսով՝ կրթության որակը և արդյունքը պայմանավորված են նաև դպրոցում դասավանդող մանկավարժի դերով և գործառույթներով:

Դպրոցն այն սոցիալական ինստիտուտն է, որտեղ դրվում է երեխայի գիտելիքների ու կարողությունների հիմնաքարը, և երեխան ձևավորվում է անհատականություն: Իսկ այս ամենի մեջ իր առանձնահատուկ դերն ունի ուսուցիչը, որի առաքելությունն է զարգացնել երիտասարդ սերնդի գիտական աշխարհայացքը, արժեհամակարգը, ազգային գիտակցությունն ու իդեալները:

Պատահական չեն Ա. Իսահակյանի խոսքերը. «Հզոր է այն ազգը, որն ունի լավագույն ուսուցչություն»: Իսկ չեխ մանկավարժ Յ. Ա. Կոմենսկին ուսուցչի գործունեությունը համարել է յուրահատուկ արվեստ, որին ներհատուկ են մարդկային բարձր կուլտուրան, հանրագիտարանային իմացությունը, ազնվությունը, խոսքին կատարյալ տիրապետելու արվեստն ու անհուն սերն իր գործի նկատմամբ:

Ժառանգելով բոլոր ժամանակների ու ժողովուրդների առաջավոր մանկավարժների աշխատանքի սկզբունքն ու փորձը՝ ուսուցչությունը ներկայանում է

որպես ժամանակակից հասարակության ստեղծագործ ուժ, սովորեցնում աշակերտներին տարբերել իսկական գիտելիքը կեղծից, որակյալը՝ անորակից, դատել առողջ, ճշմարտությանը հասնել սեփական փորձով ու գիտելիքներով: Հետևապես ժամանակակից կրթության առաջնային նպատակը ոչ այնքան գիտելիքներ փոխանցելն է, որքան այդ գիտելիքներով զինելով՝ ինչ-որ բան փոխելը:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն առարկայի դասավանդման ընթացքում ուսուցչի կողմից առաջնահերթ է ուսուցանվող առարկայի շրջանակում աշակերտներին դաստիարակել մարդկային արժեքներով, որի գագաթին հայրենասիրությունն է:

Մենք կփորձենք վեր հանել հայրենասիրության դաստիարակող գործառույթը դպրոցում աշակերտների սոցիալականացման և արժեհամակարգի ձևավորման համար:

Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է, սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Հայրենիքը նաև հայրենիքում ապրող ժողովուրդն է:

Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ հայրենիք»:

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պետք է ձևավորեն երեխաների հայրենասիրական զգացմունքները, սերմանեն հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների հարազատ վայրերի, հայրենի բնաշխարհի նկատմամբ:

Հաշվի առնելով ազգի ինքնուրույնության ձևավորման, ազգապահպանման, ինքնա- ներկայացման և զարգացման դրսևորումներում մշակույթի բաղադրիչների դերն ու նշա- նակությունը, այդուհանդերձ առանձնակի պետք է շեշտել, որ, ինչպես ապացուցում է պատմությունը, սովորողների շրջանում արժեքների ձևավորման առավել որոշիչ բաղադրիչներն են կրթությունն ու գիտությունը:

Ժամանակի մարտահրավերներին համարժեք պատասխան տալու համար, պետությունն առաջին հերթին պետք է հենվի լավ կրթության վրա, քանի որ վերջինս՝ օժտված ներքին ազատությամբ, մեծահոգությամբ, անձնվիրությամբ, հայրենասիրությամբ ու բարոյական արժեքներով, պետք է ձևավորի ստեղծագործող անհատ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջին քայլերն անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիներին, իսկ առավել գիտակցված և կայուն գիտելիքներ պետք է տան դպրոցը և բուհը: Այս փուլում ձևավորվում է անձին առանձնահատուկ «արմատային համակարգը», որն օգնում է նրան կողմնորոշվելու այնպիսի արժեքների հարցում, ինչպիսիք են՝ ընտանիքը, ազգը, հայրենիքը:

Գաղտնիք չէ, որ անձնային որակների, բարոյական արժեքների և հայրենասիրության ձևավորումը սկսվում է ընտանիքում, իսկ հետագա զարգացումը շարունակվում դպրոցում, բուհում, բանակում, աշխատանքում և այլ ոլորտներում:

Անուրանալի է դպրոցի դերը, որտեղ երեխան անցկացնում է իր կյանքի կարևորագույն տարիների մի մասը և հենց այդ տարիներին էլ նա դառնում է սեռահասուն, առավել գիտակից, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ և որոշակի արժեքներ կրող: Այդ առումով, և՛ ուսուցիչները, և՛ դպրոցի հոգեբանը, և՛, հատկապես, զինղեկը կարևոր առաքելություն ունեն լինելու աշակերտների, ապագա զինվորների մեջ պարտքի, հայրենասիրության, քաջության և բարոյական արժեքների ջատագովը, արթնացնելու համար հանուն հայրենիքի անգամ անձնազոհության գնալու մղումը:

Շատ կարևոր է դպրոցներում նպաստել աշակերտների գաղափարական մակարդակի բարձրացմանը և պատրաստությանը: Այս առումով ռազմահայրենասիրությունն աշակերտների գաղափարական մակարդակի բարձրացման անհրաժեշտ միջոցներից է: Հայրենասիրություն սերմանելն ամենաբարդ խնդիրներից է, որի վերջնարդյունքը անմիջապես չի երևում: Դա ամենօրյա հետևողական ու քրտնաջան աշխատանք է: Ապագա զինվորը պետք է գիտակցի, որ իր երկիրը երբեք անարդար պատերազմներ չի վարել, որ իր պարտքն է հայրենիքը պաշտպանել թշնամիներից ու կռվել պատմական անարդարության դեմ:

Դպրոցներում առաջնային խնդիրներից պետք է լինի աշակերտների հայրենիքի նկատմամբ անմնացորդ նվիրվածության, ՀՀ զինված ուժերում ծառայելու նկատմամբ լարվածության և վախի հաղթահարման, ֆիզիկական ու հոգեբանական պատրաստվածությանը նպաստելը՝ միաժամանակ նրանց մեջ հետաքրքրություն առաջացնելով ռազմական գիտելիքների, ռազմական մասնագիտությունների հանդեպ:

Մեր հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն իրենց դրական և բացասական ազդեցությունն են թողնում մատաղ սերդի, հատկապես դպրոցականների արժեհամակարգի ձևավորման վրա: Մեր կողմից ուսումնասիվող նյութի արդիական խնդիրներից է ձևավորել միասնական դաստիարակչական միջավայր, որը բարենտպաստ ազդեցություն կունենա

աշակերտների արժեհամակարգի ձևավորման վրա, ինչպես նաև կխթանի մանկավարժական նոր մեթոդների դիտարկմանը և մշակմանը:

Վերոթվարկածները պետք է իրականացնել նախապատրաստական և դաստիարակչական յուրօրինակ աշխատանքներով՝ զերծ պահելով նրանց փողոցային արատավոր ու անկառավարելի բարքերից:

Այսօր զինվորն արդեն լավ է գիտակցում, որ միայն որակյալ ուսուցմամբ կարող է հակառակորդի նկատմամբ պահպանել գերազանցությունը: Զենք ու ռազմական տեխնիկա ունենալը դեռ բավարար չէ պայքարելու համար: Պետք է ունենալ նաև դրանք շահագործող, դրանք, ըստ նշանակետի, օգտագործող ու կատարելագործող բարձրակարգ մասնագետներ, և հենց այս գիտակցությամբ էլ հայ զինծառայողները պետք է սովորեն ու շատացնեն իրենց գիտելիքները:

Այստեղ կարևորագույն դեր ու նշանակություն ունի մանկավարժի մասնագիտությանը՝ հատկապես զինղեկին, հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության ուսուցիչներին, դպրոցի հոգեբանին:

Ուսուցիչների մանկավարժական հմտությունները, յուրաքանչյուր երեխայի նկատմամբ նրանց առանձնահատուկ վերաբերմունքը, անկողմնակալ ու սրտացավ աշխատանքն էլ այս գործի հաջողության լուրջ գրավականն է: Մասնավորապես՝ զինղեկը պետք է գիտակցի գործի կարևորությունը, լինի իրական հայրենասիրության ջատագովը, կարողանա հմուտ ու արդյունավետ կազմակերպել ռազմահայրենասիրական աշխատանքները:

Զինղեկի արտադպրոցական և արտադասարանային աշխատանքներն աշակերտներին հայրենիքի պաշտպանությանը պատրաստելու անհրաժեշտ և անքակտելի մասն են: Փորձը ցույց է տալիս, որ արտաժամյա բազմաթիվ միջոցառումները հաճախ ավելի արդյունավետ են աշակերտների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերում:

Այսօրինակ քրտնաջան աշխատանքը ներառում է հիմնականում ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մերօրյա հերոսների, կամավորական ջոկատների հետ և այլն:

Արդյունավետ են և արդարված նաև սպորտային միջոցառումները, մրցակցային խաղերը, իսկ մարտական փառքի վայրերով արշավները ձևավորում են հարգանք ավագ սերնդի նկատմամբ և ամրապնդում նրանց գործի շարունակականությունը:

Շատ կարևոր է նաև զինղեկի համագործակցությունը հայոց լեզվի ու գրականության և պատմության ուսուցիչների հետ՝ առավել հիշարժան դարձնելով պատմության կարևորագույն իրադարձությունները, մեր ազգի հերոսների գործունեությունը, կազմակերպելով այցելություններ պատմական հիշարժան վայրեր, հուշարձանների մոտ՝ ներկայացնելով հերոսների անցած փառավոր ուղին, ծաղիկներ դնելով և իրենց հարգանքի տուրքը մատուցելով հերոսացածների շիրիմներին, որոնք անհետևանք չեն անցնում:

Դպրոցներում առանձնահատուկ է հոգեբանի աշխատանքը: Անհրաժեշտ է բարձրացնել աշակերտների ոչ միայն մարտունակ ու քաջարի ոգին, այլև նպաստել հոգեբանական պատրաստվածությանը, որը պակաս կարևոր չէ: Յուրաքանչյուր աշակերտի պետք է ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը: Հայ զինվորը պետք է հպարտությամբ հիշի, որ ինքն ու իր ընկերները հաջողությամբ են պահպանելու հայրենիքի խաղաղությունն ու անդորրը:

Դպրոցներում աշխատող հոգեբան-մանկավաժների խնդիրներից է ավարտական դասարաններում հոգեբանորեն նախապատրաստել տղաներին զինվորական ծառայությանը, որպեսզի նրանք պատրաստ լինեն զինվորական երդմանը, անձնուրաց, քաջ և արիաբար ծառայելուն, պաշտպանելու իրենց հայրենիքը, կատարելու զինվորական պարտքը՝ տանելով զինվորական ծառայության դժվարությունները:

Նրանք պետք է ներշնչեն ապագա զինծառայողներին իսկապես հավատալու իրենց անձնական երդմանը, որ այն չափազանց կարևոր է ընդհանուր գործի հաջողության համար: Անհրաժեշտ է դրական գծեր և ազնիվ սկզբունքներ ձևավորել աշակերտների մեջ, ինչպես նաև աշխատանքներ կատարել բացասական երևույթների դեմ պայքարի ուղղությամբ, նպաստել հայրենասիրական ոգու բարձրացմանը, քաջությամբ ու պատվախնդրությամբ աչքի ընկնելուն:

Այս ամենից կարելի է եզրակացնել (գծապատկեր 1), որ դպրոցներում իրականացվող ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է տարբեր մասնագետների շղթայական աշխատանքների փոխկապակցվածությունից, միջառարկայական կապը, որոնք ընդգրկում են մի շարք ազգային գաղափարական դաստիարակության միջոցառումներ, ցերկույթներ, բաց դասեր, դաշտային պարապմունքներ:



Հայրենասիրական գործառույթի իրականացման առումով դպրոցում աշակերտները՝ կընդլայնեն Հայաստան աշխարհի, նրա հերոս զավակների մասին տեղեկությունների իմացությունը, կխորացնեն ճանաչողական հետաքրքրությունը հայրենի երկրի նկատմամբ, կամրակայեն դասավանդվող նյութում նկարագրվող հերոսների վարքագծի և արարքների վերաբերյալ համեմատելու, պարզ եզրակացություններ կատարելու կարողությունները, կբնութագրեն հերոսներին և կվերլուծեն նրանց արարքները, տեղեկատվական աղբյուրներից կորոնեն-կգտնեն տեղեկություններ նկարում պատկերված որևէ հերոսի մասին, կպատրաստեն հաղորդում և կներկայացնեն ընկերներին, ձևավորված բարոյական արժեքները կօգտագործեն ինքնադաստիարակման նպատակով, կկարողանան գնահատել գործող անձանց վարքագծի դրդապատճառները, գնահատել և ապրումակցել նրանց, կվերլուծեն ներկայացվող նյութի բովանդակությունը՝ արտահայտելով սեփական զգացմունքներն ու տպավորությունները, կմեկնաբանեն և իրենց վերաբերմունքը կարտահայտեն հայրենիքի, պատերազմի և խաղաղության վերաբերյալ կկարողանան կապեր գտնել նյութի բովանդակության, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև:

Կրթության նպատակն անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:

Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլև այլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Արժեքային կրթությանմշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է:

Սովորողներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական փորձովորոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել:

Շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասավանդվող նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:

Այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Այսպիսով՝ ուսուցիչը դասապրոցեսի ընթացքում որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում:

Ուսուցիչն անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումների ու դասերի ընթացքում փորձում է լուծել դաստիարակչական խնդիրներ: Այս մեթոդները նպաստում են ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում է նաև բարոյական դաստիարակությունը:

Հայկական սովետական հանրագիտարանում գրված է.
«Դաստիարակությունը անհատի ձեւավորման նպատակասլաց, համակարգված գործընթացն է՝ նրա ակտիվ մասնակցությունը հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար»:

Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես:

Դաստիարակության տարբեր կողմերի շարքում նա գլխավոր տեղը հատկացնում է բարոյականության դաստիարակությանը, որովհետև, ըստ նրա, բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն և ուղղամտություն, աշխատասիրություն, կարգապահություն և պատասխանատվության զգացում, որը զուգակցվում է համեստության հետ: Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն, պարտքի զգացում:

Եթե նախկինում հասարակությունն առավել կարևորում էր հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, աշխատասիրության ու կոլեկտիվիզմի դաստիարակությունը, ապա այսօր շեշտադրվում են այնպիսի անձնային հատկություններ, ինչպիսիք են՝ մարդասիրությունը (բարությունը) և հանդուրժողականությունը, կյանքի հանդեպ ակտիվ դիրքորոշումը, ստեղծագործական ընդունակությունները և կրեատիվ-ստեղծարար դիրքորոշումը, ինքնասիրությունն ու արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունն ու համագործակցելու կարողությունները,

քաղաքացիական հատկությունները, այսինքն՝ այն ամենը, ինչ հանգեցնում է սոցիալական զգացմունքների զարգացմանն ու ձևավորմանը:

Դպրոցական տարիքում բարությունն ու մարդասիրությունը երեխայի հոգեկան ակտիվության դրսևորումներ են, որոնք մղված են գործողությունների և հարաբերությունների հաստատման:

Աշակերտերի մեջ արժեքային համակարգը դրսևորվում է բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճանով, ներքին սուբյեկտիվ դիրքորոշմամբ աշխարհի հանդեպ:

Բարոյական վարքագիծը դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

· Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:

· Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:

· Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:

· Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ:

Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ: Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է, որը կազմակերպվում և ղեկավարվում է մանկավարժների կողմից:

Դպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին՝ հատկապես ծնողներին և ուսուցիչներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն իրականացվում է որոշակի միջոցներով:

Դպրոցական տարիքում արդյունավետությամբ կիրառվում են գեղարվեստական միջոցները, որոնք նպաստում են աշակերտների բարոյականության զարգացմանը

գեղագիտական շեշտադրումներով: Գեղարվեստական միջոցներից հարկ է հատուկ առանձնացնել գեղարվեստական գրականությունը: Հերոսների գործողությունները մեծ հուզականությամբ են ընկալվում երեխաների կողմից և խորը հետք թողնում նրանց բարոյական զգացմունքների և պատկերացումների վրա:

Արժեքների ձևավորման ընթացքում անգնահատելի է բնության դերը, բնության հետ շփման ընթացքում ստացած դրական հուզական լիցքավորումը:

Արժեքների ձևավորման միջոց է երեխայի ինքնուրույն գործունեությունը՝ խաղային, աշխատանքային, կերպարվեստային, կառուցողական և ուսումնական:

Սակայն Մ. Ի. Լիսինան և Ա. Գ. Ռուզսկայան աշակերտի գործունեության ձևերից հատուկ նշանակություն են տալիս մեծահասակների հետ հաղորդակցմանը և ինքնուրույնությանը հասակակիցների հետ հարաբերվելու ընթացքում:

Եվ, ի վերջո, արժեքների ձևավորման լավագույն միջոց է աշակերտին շրջապատող մթնոլորտը, այն սոցիալական միջավայրը, որտեղ երեխան ապրում և մեծանում է:

Սիրո և փոխադարձ հարգանքի հիմունքներով կառուցված բարյացակամ մթնոլորտը, ընկերական փոխվստահելի հարաբերությունները խթանում են բարոյական դաստիարակության գործընթացը և նպաստում սոցիալական զգացմունքների զարգացմանը:

Բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ աշակերտը ձեռք է բերումբարոյական որակների ձևավորման ընթացքում:

Այս ամենը օգնում է կառուցել արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքներով՝ ուղղված սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

Տարբեր տարիքի երեխաների հոգեկան հատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճիշտ որոշելու երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը՝ նրանց ցուցաբերելով անհատական մոտեցում:

Իսկ աշակերտի բարոյական հատկությունների զարգացումն իրենից ներկայացնում է նրա գործունեության տարբեր տեսակներով պայմանավորված փոփոխությունների հարատև ու անընդհատ գործընթաց:

Միջին դասարաններում բարոյական գնահատումները պարզելու համար ուսուցիչն օգտվում է զրույցի, դիտումների մեթոդներից, կարդում է հեքիաթներ և պատմվածքներ հերոսների, քաջերի մասին ու այդ ընթացքում ուշադրություն է

դարձնում երեխաների դրսևորած վերաբերմունքին, ժեստերին, արտահայտություններին:

Ուսուցիչը ներկայացնում է տարբեր իրավիճակային նկարներ, կոնֆլիկտային իրադրություններ և որոշում նրանց ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, նրանց դրական կամ բացասական վերաբերմունքը, համարձակությունն ու պատրաստակամությունը օգնության հասնելու և այլն, որոնք այն նախադրյալներն են, որոնք հետագայում կձևավորեն նաև հայրենասիրություն:

Հատուկ զրույցների միջոցով երեխաներին ծանոթացնում են, թե ինչ է հայրենիքը, ինչ է պահանջվում իրենցից և փորձում են նրանց հասկանալի բացատրել, թե ինչու ենք սիրում մեր բնօրրանը: Գաղտնիք չէ, որ չի կարելի հայրենասեր դաստիարակել, եթե երեխան ինքնասիրահարված է, բարի ու աշխատասեր չէ:

Աշակերտի մեջ հայրենասիրություն ներարկելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա հիմքերը շատ խորն են, որոնք սկիզբ են առնում նախնիներից, հետո ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Սրանք գաղափարական հիմնավորում են ստանում և մարդը սովորում է, թե ինչպես պետք է ապրի ու վարվի, որ պատշաճ ու հարիր լինի այն հասարակության ընդունած ու գործող նորմերին, որում ապրում է:

Սովորաբար աշակերտը դեռահասության և պատանեկան տարիքում իր արարքներում հաճախ հիմնվում է հասարակական կարծիքի և բարոյական պատկերացումների վրա, յուրացնում է դրանք դաստիարակության պրոցեսում, և գալիս է մի պահ, որ արդեն կարող է ինքնուրույն կարգավորել ու վերահսկել իր արարքները, գործողությունները՝ առաջնորդվելով սեփական բարոյական նորմերով, արժեքներով, պարտքի պատասխանատվության գիտակցմամբ, սեփական արժանապատվությամբ ու խղճի թելադրանքով: Հատկապես ավագ դպրոցում կարելի է խոսել հայկական ինքնության մասին: Պետք է բացատրել, որ «Ինքնությունը ունենում է տարբեր անդրադարձներ, որոնք վերաբերում են՝

ա) ես-ի կամ անձի ինքնությանը,

բ) սոցիալական ինքնություն, որը կապված է անձի սոցիալական կարգավիճակի և վերջինիս անձի մակարդակում վերծանման հետ,

գ) կոլեկտիվ ինքնություն, որը կարող է կապված լինել այն կոլեկտիվի կամ կոլեկտիվների հետ, որին տվյալ պահին անձը պատկանում է,

դ) մասնագիտական, որը առնչվում է անձի ընտրած մասնագիտությանը,

ե) էթնոազգային ինքնություն, որտեղ խոսվում են թե՛ ազգային պատկանելության հույժ կարևոր, թե՛ էթնոսին առնչվող ինքնության ուղենիշները:

Այս ամենն առանձնանում է հետևյալ ընդհանուր գծերով՝ նմանատիպ լեզու, հագնվելու մշակույթ և միևնույն ազգային ծագում, աշխարհագրական ապրելավայր, կրոն, զբաղմունքների ձևեր և սեփական ինքնությունը պահպանելու հակվածություն»:

Դաստիարակության կարևոր կողմերից է ազգային ինքնագիտակցության, ազգային պատկանելության խնդիրը, և հարկ է սովորողի գիտակցությանը հասցնել հայրենասերի բարձր կոչումը, հայրենիքի վեհ գաղափարը և նախնիների փառավոր անցյալը, և ավելորդ չէ մեկ անգամ ևս փաստել, որ հայի հայրենասիրությունը խարսխված է դարավոր պատմության ակունքներում, նախնիների և նրանց անցած փառավոր ուղու և փորձի, ինչպես նաև մեր օրերի արցախյան պատերազմում թրծված ազատամարտիկների սխրանքի, անձնուրացության, անուրանալի կամքի, արժանավայել ապրելու, հողը և հարազատներին պաշտպանելու, հայրենիքը, ծնողին և երեխային աստվածացնելու ու անմահացնելու հիման վրա: Մեր նախնիներից մեզ է փոխանցվել նրանց արդարամիտ, քաջ ու անկոտրում կամքը, տոկունությունը, լավատեսությունը և անսահման սերը հայրենիքի նկատմամբ և անմնացորդ նվիրվելու պատրաստակամությունը, որը հայրենիքի անկախության ու ազատության կարևորագույն գրավականներից մեկն է:

Անվերապահ պետք է հասկանալ, որ հայրենիքը ուղղակի աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: Այդ առումով կարելի է նշել Նժդեհի հետևյալ միտքը. «Հայաստան աշխարհը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբենը, Մամիկոնյանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործությունները»:

Հայի պայքարի երկար ու ձիգ տարիների ընթացքում բազմաթիվ հարկադրված ճակատամարտեր են մղվել և անհնար էր, որ այդ մարտերը մեր մեջ հայրենասերի ու ռազմիկի ոգի չդաստիարակեին:

Պատմության դասերը ուսանելի են հայ երեխաների համար, դրանք պայքարելու և հաղթելու յուրատեսակ դասեր են, որոնք իրենց նորօրյա դրսևորումը ստացան Արցախյան պատերազմում ու հաղթանակներում: 2014-2015 թթ. դիվերսիաները,որին հաջորդեց 2020 թ. տեղի ունեցածը, լոկալ (տեղային) բախումները, պատերազմական իրավիճակները և մեր երիտասարդների անհերքելի քաջագործությունները, որոնք հայրենասիրության վկայությունն են: Այս ամենը նոր ու արյունոտ էջեր ավելացրեցին մեր հնագույն ու հարուստ տարեգրության մեջ:

Անմնացորդ պայքարը հայ զինվորի մարտունակության և հայ ժողովրդի բարոյական ոգու օրինաչափ աճն է և առհավատչյան:

Համոզվում ենք, որ հայի էությունը դրսևորվում է հատկապես ճակատագրական, օրհասական պահերին, երբ անհատները միավորվում են և դրսևորում են հոգու միասնություն:

Սովորողների բարոյական նորմերի, հայրենասիրության ձևավորման արդյունավետությունը ձեռք է բերվում այն ժամանակ, երբ դաստիարակության խոսքային մեթոդները զուգակցվում են տարբեր մեթոդների, գործունեության տարբեր ձևերի հետ, և աշակերտը կամա, թե ակամա այդ գիտելիքները դրսևորում է իր վարքում, գործողություններում և դառնում է դրա կրողը, ջատագովն ու դրոշակակիրը:

Պետք է նշել, որ աշակերտների մեջ արժեքային համակարգի ամրապնդման գործում մեծ է անձի ինքնակառավարման դերը: Ինքնակառավարումը անձի վարքի կարևորագույն բաղադրիչներից է, որը, ինչպես նաև գործունեության կարգավորման մեխանիզմների ձևավորումը սկսվում են մարդու կենսագործունեության ընթացքում վաղ տարիներից սկսած և շարունակվում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում:

Հույզերի, անձնային հատկությունների, պահանջմունքների, նպատակների, դիրքորոշումների, արժեհամակարգի, իդեալների ձևավորման և դրանց կարգավորիչ գործառույթների ընդլայնմանը զուգընթաց ինքնակառավարման համակարգը կատարելագործվում է, իսկ ուղղորդիչ կառուցվածքը բարդանում:

Այն ինտեգրացված գործընթաց է, որը ենթադրում է անձի իմացական, հուզակամային ոլորտների և անձնային հատկությունների, կառույցների համադրական գործունեություն:

Գիտական գրականության մեջ ինքնակառավարման հիմնախնդիրն ուսումնասիրված է տարբեր տեսանկյուններից, սակայն նրա առանձին բաղադրամասերի, անձնային հատկությունների և անձնային կառույցների համակարգային ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտելու նրա առանձին բաղադրամասերի համահարաբերակցությունը և նրանցից յուրաքանչյուրի գործառույթը՝ ինքնակառավարման ընդհանուր գործընթացում:

Ինքնակառավարումը կարևորվում է, հատկապես, սովորողի-աշակերտի գործունեության լարվածության իրավիճակներում, երբ նա կանգնած է մի կողմից սեփական հուզական ոլորտի կարգավորման, մյուս կողմից՝ գործունեության ողջ ընթացքի վերահսկման և կառավարման խնդիրների առջև:

Այս պայմաններում առանձնակի նշանակություն է ստանում մի կողմից՝ ինքնակառավարման մեխանիզմների, մյուս կողմից՝ անձնային հատկությունների ուսումնասիրությունը և հոգեկան տարբեր վիճակներում դրանց համահարաբերակցման օրինաչափությունների բացահայտումը:

Այդ իսկ պատճառով ուսուցիչը պետք է նախևառաջ ուսումնասիրի աշակերտի ինքնակառավարման առանձին բաղադրամասերի և անձնային հատկությունների համահարաբերակցության առանձնահատկությունները՝ հոգեկան տարբեր վիճակներում: Ուսումնասիրության նպատակը կլինի բացահայտելու ինքնակառավարման բաղադարամասերի և անձնային հատկությունների համահարաբերակցային առանձնահատկությունները հարաբերական հանգստի և ուսուցանվող նյութի պատասխանելու կամ քննական լարվածության պայմաններում:

Ենթադրվում է, որ ինքնակառավարման բաղադրամասերը սերտ կապված են անձնային հատկությունների հետ և, օրինակ, քննական լարվածության պայմաններում մասնակի փոփոխություններ են կրում: Հոգեկան լարվածության պայմաններում ինքնակառավարման տարբեր բաղադրամասերի արդյունավետությունը պայմանավորվում է որոշակի անձնային հատկություններով:

Արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունի նաև հանդուրժողականությունը:

Դեռևս անտիկ շրջանի փիլիսոփայական մտքում կարելի է հանդիպել այնպիսի համարժեք գաղափարների, որոնք համապատասխանում են ժամանակակից «հանդուրժողականության» գաղափարին:

Հին Հռոմում «tolerare» (տանել, դիմանալ, համբերել) եզրը հիմնականում գործածում էին համբերության կամ համբերատարություն իմաստով, չնայած կային եզրի նաև այլ նշանակություններ: Այնուամենայնիվ, «հանդուրժողականությունը» իր ժամանակակից իմաստով գործածության մեջ մտավ Եվրոպայում ռեֆորմացիայի ժամանակաշրջանում, երբ հանդուրժողականությունը առանցքային դեր ունեցավ կրոնական կոնֆլիկտների լուծման դեպքում:

Արագ զարգացող աշխարհում մեծ տարածում գտած հանդուրժողականության մոդելը, որը կիրառվում է կրոնական կազմակերպությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը մեծացնելու նպատակով, ինչպես նաև քաղաքական հանդուրժողականությունը, հիմնվում է ազատական արժեքների վրա:

Այսօրինակ մոտեցումն առաջին անգամ ձևակերպել է անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը: «Ուղերձ կրոնական հանդուրժողականության մասին» տրակտատով Ջ. Լոկը կրոնական ու քաղաքական հիմնախնդիրները ռացիոնալ քննարկման հիմքն է դնում:

Նրա կողմից արծածված փիլիսոփայության հիմնական միտքն այն էր, որ քրիստոնյաների փոխադարձ հանդուրժողականությունը ճշմարիտ եկեղեցու հիմնական բնութագրիչն է: Չնայած նրան, որ վերածննդի շրջանում կիրառված հանդուրժողականություն հասկացությունը բովանդակային ու իմաստային մի շարք առումներով բավականին մեծ փոփոխությունների է ենթարկվել, այնուամենայնիվ նրա քաղաքական նշանակությունը, արդիականությունը և հնչեղությունը պահպանվել է մինչ մեր օրերը:

Լուսավորության շրջանում հանդուրժականության գաղափարն առավելապես առնչվել է եկեղեցուն ու կրոնին՝ պետությունը եկեղեցուց անջատելու, դպրոցը՝ եկեղեցուց, կրոնական բազմախոհության, կրոնական ազատությունների լիբերալ սկզբունքների տեսքով: Մտավոր հեղափոխությունը մարդկության պատմության մեջ հանգեցրեց նրան, որ ինստիտուտները (եկեղեցի, սինագոգ և այլն) մղվեցին երկրորդական պլան ու առաջին տեղում հայտնվեց մարդը՝ իր ազատ կամքով ու ազատ պահանջմունքներով:

Հանդուրժողականությունը ներկայիս ամենից շատ քննարկված ու միևնույն ժամանակ ամենաքննադատված հասկացություններից է: Հանդուրժողականության մասին ձևակերպումները բազմաթիվ են, այդ իսկ պատճառով էլ ուսուցիչը պետք է փորձի այս հասկացության հստակ ձևակերպումը և դրա արդիականությունը համակողմանի մատուցի աշակերտներին՝ նրանց մեջ սերմանելով այս արժեքային համակարգի կարևորությունը: Քանի որ երբեմն անհանդուրժողականությունն է համարվում արժեք, երբ այն դրսևորվում է օրենքի խախտման, հասարակական կարգի տապալման, բարոյաէթիկական նորմերի չպահպանման, հանցագործներին ու մեղավորներին չպատժելու, մարդկության դեմ կատարվող հանցագործությունների կամ բնության ռեսուրսները շահագործելու ու նմանատիպ այլ դեպքերի նկատմամբ:

Ի վերջո, հանդուրժողականությունը բազմազանության ընդունումն է, և աշակերտի այն կարողությունը, որով նա ճանաչում է սեփական վախերը, օբյեկտիվորեն գնահատում իր վերաբերմունքն այն մարդկանց նկատմամբ, որոնց հայացքները, կենսակերպը, կրոնը, ազգությունը և այլ բնութագրիչները տարբերվում են իր ունեցածից:

Կրթական նոր չափորոշիչների ներդրումը ենթադրում է որակյալ կրթության ապահովում, որը հնարավոր է, եթե աշակերտ-ուսուցիչ միջանձնային փոխհարաբերությունները համալրվեն նոր որակի և ձևաչափի դասավանդման հարաբերություններով:

Ուսուցիչը կրթական միջավայրում պետք է ձևավորի համագործակցության և փոխներգործության այնպիսի մշակույթ, որը հնարավորություն կտա սովորողին բավարարելու կրթական, սոցիալական պահանջմունքները և նախադրյալներ ձևավորելու հետագայում մասնագիտական ոլորտում ինքնակրթության, ինքնաճանաչման համար:

Ուսուցիչ-աշակերտ կրթական հարաբերություններն օգնող-օժանդակող, խորհրդատվական հարաբերություններ են՝ կարգավիճակադերային մոդել, որտեղ կարևոր է կամավորության սկզբունքը:

Դպրոցում դասավանդումը ենթադրում է սովորողների զգացմունքային և հոգեբանական, մասնագիտական աջակցություն, համապատասխան մասնագիտական կոմպետենցիաների ձևավորում և զարգացում, դրա արդյունքում ինքնաճանաչման, ինքնահիրացման կարողությունների ձևավորում:

Այս հարաբերությունները ենթադրում են ուղղակի համագործակցություն ուսուցչի և աշակերտի միջև:

Ուսուցիչը դասի ընթացքում առավել շատ կիրառում է կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդախումբ՝ հիմնականում դրսևորելով կառավարման ժողովրդավարական ոճը և այն զուգակցելով ազատական ոճի հետ:

Ուսուցիչը դասապրոցեսում կիրառում է նաև մանկավարժական ախտորոշման գործառույթ, որի նպատակից և խնդիրներից է բխում հետագա ախտորոշիչ գործողությունների շղթան, որը միահյուսվում է կառավարչական գործառույթներին:

Աշակերտը կիրառվող մանկավարժական ախտորոշման գործառույթն ընդունում է հարաբերական կայուն, համալիրային, դարձելի, բարդ և զարգացնող առանձնահատկություններով:

Ուսուցիչ-աշակեր-ուսուցիչ կրթական ու դասավանդման հարաբերություններն արդյունավետ են, եթե հաղորդակցվող եռյակը գիտակցում է իր սոցիալական դերերը, հոգեբանորեն կարող է և պատրաստ այդ հարաբերություններին՝ միմյանց հետ իրականացնելով մանկավարժական ախտորոշման գործառույթ:

Ինչպես դասապրոցեսը, այնպես էլ մանկավարժական հնարքներն ունեն զարգացման փուլեր, որոնք վերլուծվում են համապատասխան կանխատեսումներով, օրինակ, արժեքների ձևավորում, բարոյական դաստիարակություն և այլն:

Կրթությունը, սովորողների շրջանում արժեհամակարգի ձևավորումը հիմնվում են «գիտելիքներ, կարողություններ,հմտություններ» հայտնի սկզբունքի վրա, որտեղ գիտելիքի բաղադրիչը միշտ գերակայող է եղել:

Այս ամենը իսկապես բնական է, որովհետև ավանդական դպրոցում գիտելիքը դիտարկվել է որպես նպատակ:

Այսօրվա իրականության մեջ գիտելիքը, ձևավորված արժեքային համակարգն արդեն ռեսուրս է և համարվում է անփոխարինելի միջոց:

Կրթության համար գիտելիքը սկզբնակետ է, իսկ նպատակը՝ գիտելիքը կիրառելը, նրանով նորանոր որակների ձեռքբերումը:

Այս ամենը հաշվի առնելով «դպրոց» սոցիալական ինստիտուտի նպատակից ու առաջադիր խնդիրներից են բխում վերաիմաստավորվող բարոյամշակութային արժեհամակարգում ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները: Կրթական նոր հարացույցի անձնակողմնորոշիչ ուղղվածությունը, ինովացիոն գործընթացների ներդրումը ենթադրում են ուսուցչի ինովացիոն նոր տիպի ձևավորում, նորովի մոտեցում նրա անձին ու մասնագիտական գործունեությանը, որի խնդիրն է սովորեցնել մտածել, տրամաբանել, հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հոգեկերտվածքին:

Այսօրինակ սոցիալական առաջադրանքներն իրականացնելիս կարևորվում են համապատասխան մասնագիտական դաշտում ուսուցչի դիրքորոշումները, արժեհամակարգը, ձեռքբերումները, որով և պայմանավորված է սովորողների անձի ձևավորման և սոցիալականացման գործընթացի արդյունավետությունը:

Մասնավորապես սա երկկողմանի գործընթաց է, որում կարևորվում է նաև սովորողի դերակատարությունը:

Ավելին, աշակերտը ստանում է իրեն բացահայտելու, իր պահանջներն ու հետաքրքրությունները բավարարելու, ինքնահաստատվելու, ինքնաիրացվելու հնարավորություն:

Կրթության համակարգում տեղի ունեցող բոլոր գործընթացներն ու փոփոխությունները կարող են դիտարկվել արդյունավետ, եթե նրանք բարձրացնում են սովորողների մոտիվացիան, ներգրավվածությունը՝ նպաստելով կրթության որակի բարելավմանը:

Եթե չկա ակտիվ համագործակցություն, առաջընթաց, ուրեմն իրականացվող փոփոխություններն անարդյունավետ չեն:

21-րդ դարի աշակերտն ամենակարողն է իր պատկերացումներով, աշխարհընկալմամբ ու տեղեկացվածությամբ:

Ուստի մանկավարժորեն պետք է ճիշտ օգտագործել այս ամենը՝ ի նպաստ երեխայի բարօրության: Դրա համար անհրաժեշտ են որոշակի քայլեր, որոնք կապահովեն գործընթացի արդյունավետությունը:

Նախ՝ ուսուցիչն ինքը պետք է փոխվի, վերապատրաստվի, քայլի ժամանակի պահանջներին համընթաց, դպրոցը պետք է վերակառուցվի՝ զերծ մնալով կարծրատիպերից, ուսումնական և մասնագիտական միջավայրի ապահովում, ուսուցչի գործունեության մանկավարժական արժեհամակարգի ձևավորում:

Ուսուցչի մանկավարժական գործունեությունը պետք է կառուցել այնպես, որ այն լինի մարդասիրական բնույթի:

Արդյունքում՝ գործունեության բովանդակությունը ևս կունենա նմանաօրինակ ուղղվածություն: Մանկավարժական արժեքներն անմիջականորեն ազդում են մանկավարժի կատարելատիպերի (իդեալների), մասնագիտական ընդունակությունների զարգացման, վարպետության, սովորողների հետ փոխհարաբերությունների ձևի և բնույթի վրա:

Խնդիրները քիչ չեն, սակայն վերոնշյալ փոփոխությունները հնարավորինս կապահովեն 21-րդ դարի նոր սերնդի համակողմանի զարգացումն ու արժեհամակարգի ձևավորումը: Ուսուցչի գործունեության մանկավարժական արժեհամակարգը դիտարկելիս առանձնացվում են նաև նրա տեղեկատվության տիրապետման մի շարք գործառույթներ.

Կրթական – հիմք ընդունելով ուսուցման գիտականության սկզբունքը՝ սովորողների մեջ ձևավորում է աշխարհի մասին համապարփակ, հիմնարար գիտելիքների համակարգ:

Դաստիարակչական – ձևավորում են սովորողների կրթամշակութային պատկերացումները, վարքագծային նորմերը, արժեհամակարգը:

Զարգացնող – շարունակություն է վերոնշյալ երկու գործառույթներին, քանզի նրանցով են պայմանավորված սովորողի անձի ձևավորումն ու զարգացումը, էթնիկական սոցիալականացումը՝ որպես ինքնուրույն գործունեություն ծավալող սուբյեկտի:

Օգնող-աջակցող – մանկավարժական աջակցությունը երկարատև գործընթաց է, որն ուղղված է սովորողի անձի լիարժեք ձևավորմանն ու զարգացմանը: Այն մշտական ներգործություն է սովորողի կյանքում, որի արդյունքում ստեղծվում են մանկավարժական այնպիսի պայմաններ և բարենպաստ միջավայր, որոնք բարերար ազդեցություն կունենան սովորողների զարգացման և արժեհամակարգի ձևավորման վրա: Այն ուսուցչի «քողարկված ներկայությունն է» սովորողի կյանքում, որի դեպքում երեխան կարող է ինքնուրույն լուծել սեփական խնդիրները:

Եզրակացություն

Այսպիսով, 21-րդ դարի ուսուցչի կարևոր նպատակը ոչ միայն գիտելիքներ փոխանցելն է, այլև աշակերտի ուղղորդված ինքնազարգացումն ու արժեհամակարգի ձևավորումը, վերջինիս համար համապատասխան պայմանների ստեղծումը, նրա համար լիարժեք ազատության տարածք ապահովելը, օգնությունը՝ կառուցելու սեփական կյանքն ու աշխարհայացքը, դառնալու իր կյանքի ակտիվ դերակատարը:

Այս աշխատանքում քննարկվել են աշակերտների բարոյական նորմերի ձևավորման, ուսուցանվող առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման, հայրենասիրության դաստիարակման հարցերը: Տրվել են այն ուղիներն ու միջոցները ,որոնք նպաստելու են բարոյական դաստիարակության, քաջության, նվիրվածության, հայրենասիրության ձևավորմանը և պատմական փառավոր էջերի արժևորմանը, սխալների գիտակցմանը:

Աշխատանքում դիտարկվել է նաև հայրենասիրական դաստիարակության հասկացությունը, նրա էությունը և բովանդակությունը: Բնորոշվել են անձի հայրենասիրական որակների ձևավորման մեթոդները, ինչպես նաև բնութագրվել են դասերի և արտադասարանային միջոցառումների կազմակերպման բովանդակությունը և մոտեցումները՝ ուղղված հայրենասիրության զարգացմանը:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ աշակերտների ռազմահայրենասիրության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, ինչի առնչությամբ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել: Հայրենասիրության դասերը աշակերտի անձի ինքնահաստատման, կայացման, բարոյական արժեքների ձևավորման, պատշաճ վարվեցողության, ռազմական գաղափարադաստիարակչական մտածելակերպի բարձրացման և հետագայում ՀՀ զինված ուժերում ծառայելու նախապայմաններ են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:

2. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն», Երևան, 2/2017, 191 էջ:
3. Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2004:
4.Հանրակրթության պետական չափորոշիչ՝
https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
5.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք՝
https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908
6. Ղույումչյան Գ. Ե., Գիրք 1, Երևան, 2005 թ. 463 էջ.:
7. Մարտական կանոնադրություն 3-րդ մաս,ՆԶՊ 8-րդ, 9-րդ, 10-րդ դասարանների դասագիրք, Երևան, 2010 թ.:
8. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
9. Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները //Հանրապետական գիտաժողով, Եր., 2013: 258-259 էջ:
10. Аракелов Г.Г., Жариков Н.М., Учителям и родителям о психологии подростка, М., Высш. шк., 1990. 3. Киселева О.О., Теория и практика развития профессионально-педагогического потенциала учителя, М., 2002.
11. Дорошко О. М. Методологическое значение категории «культура» в педагогике// Вестник Томского государственного педагогического университета. 2013. N6 (134). с. 59-63.
12. Коупленд Норман. Психология и солдат //Военизда. 1991. 95-100 с.
13. Пионова Р.С., Педагогика высшей школы. Учеб. пособие, Минск., 2005. 5. Федорова С.Н., Этнокультурное развитие детей, М., 2014.
14. Игнатьева Е.В., Рябкова Ю.В., Исследование готовности преподавателей университета к осуществлению наставнической деятельности, «Перспективы науки и образования», 2018, № 4, с. 34.
15. Шилова О.Н., Ермолаева М.Г., Ахтиева Г.Р., Современное состояние и проблемы развития института наставничества молодых учителей, «Человек и образование», 2018, № 4, с. 57.